

ԱՌՅՈՒԾԸ, ԱՐՋԸ ԵՎ ԳԱՅԼԸ ԱՌՅՈՒԾԸ, ԱՐՋԸ ԵՎ ԳԱՅԼԸ

Առյուծը, արջը և գայլը մի անգամ ասացին.

— Մենք ինչո՞ւ ենք հում ուտում մե՛ր որսը: Մարդկանցից մեկին բռնենք, որ, իրենց սովորույթի համաձայն, կերակուր պատրաստի մեզ համար մեր որսից:

Եվ բռնեցին մեկին ու կարգեցին խոհարար:

Մարդը նեղվելով նրանց ձեռքի տակ մնալուց՝ հնար մտածեց ազատվելու ճեղքեց մի մեծ գերան և նրա ամեն կողմում սեպեր դնելով՝ ասաց առյուծին ու մյուսներին.

— Օգնեցե՛ք ինձ ճեղքելու այս փայտը: Դրե՛ք ձեր ձեռքերը ճեղքվածքի մեջ և ձգեցե՛ք:

Երբ նրանք դրին ձեռքերը, մարդը դուրս քաշեց սեպերը: Գազանները մնացին կաշկանդված: Այդ ժամանակ մարդը կացինն առավ և ասաց.

Նախ առյուծից սկսենք:

Ասաց և ջարդեց բոլորին:

Մխիթար Գոշ